Մրցույթներ՝ «ՀՀ Լոռու մարզի Լերմոնտովոյի Ե. Ուդալցովի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի դասվարի (ռուսերենով ուսուցմամբ դասարանի) (19 դասաժամ), դասվարի (հայերենով ուսուցմամբ դասարանի) (17 դասաժամ), հայոց լեզվի և գրականության (5 դասաժամ), ռուսաց լեզվի և գրականության (21դասաժամ), իմ հայրենիքի (6 դասաժամ), մաթեմատիկայի (10 դասաժամ), քիմիայի (5 դասաժամ), պատմության (10 դասաժամ), աշխարհագրության (6 դասաժամ), կենսաբանության (6 դասաժամ), բնության (6 դասաժամ), ֆիզկուլտուրայի (6 դասաժամ), երաժշտությա (6 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար: Ռուսերենի իմացությունը պարտադիր է:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝գրավոր և բանավոր: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև 1),
2. փաստաթուղթ (դիպլոմ՝ Հանրակրթության մասին՝ ՀՀ օրենքի 26-րդհոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. անձնագրի պատճենը,
4. ինքնակենսագրություն (Ձև 4),
5.թափուր աշխատատեղն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7.այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ
9.հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հաստատող փաստաթուղթ (առկայությանդեպքում),
10.որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝հավաստող փաստաթուղթ:

Տնօրեն իկողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկը ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթեր ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև սեպտեմբերի 5-ը ներառյալ, ամեն օր, ժամը 10-ից մինչև 15-ը,բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթները տեղի կունենան սեպտեմբերի 10-ին՝ ժամը 12:00-ին, Լերմոնտովոյի Ե. Ուդալցովի անվան միջնակարգ դպրոցում: Հասցեն՝ գ.Լերմոնտովո:

Տեղեկությունների համար զանգահարել (0322) 6-86-58, (091)01-23-21 հեռախոսահամարներով: